


իսկոյն կը ժամանեմ փետային տունը: Ընդ-
արձակ գաւթին մէջ զետեղուած են խե-
ցեղէն ամաններ՝ լեցուն օշարակներով, սե-
ղաններ՝ որոց վրայ զիջուած են խորոված
գառան ամբողջ քառորդ մասն և ուրիշ ամեն
տեսակ տաճկական համարամբ. թիչ մ'անդին
կայ մանդալ (կրակարան) մը՝ որու վրայ կը
տաքցընեն խահուէի համար գործածուելիք
շուրը:

Թրգմ. Հ. Ե. ԱՐԲԱՆԱՄԵԱՆ

Շարայարելի



ՄԱԳՆԵՒՍԱԿԱՆ ՔՈՒՆ

HYPNOTISME

(Շար. տես էջ 324)

ԳՒՈՒԻ ԱՌԱՋԻՆ

ՄԱԳՆԵՍՈՒԹԵԱՐԳՔՆԱՅԸՆԵՆՈՒ ԿԵՐԳԵՐԻՆ.

ՄԱԳՆԵՍԱԿԱՆ ՔՈՒՆ թուն իսկ էու-
թիւնը կ'ուզենք ճանչնալ. բայց արդեօք պի-
տի յաջողի՞նք, և այն՝ ի՞նչ կերպով: Իւրա-
քանչիւր ոք գիտէ՝ թէ ներկայ միճակին մէջ
մարդս չի կրնար ճանչնալ ուղղակի ո՞ր և
է իրի բնութիւնը և զոյացութիւնը: Վասն
զի մարդկային միտքն ոչինչ նուազ քան
աչքն՝ կարող չէ մտաւոր տեսութեամբ ըմ-
բռնել զոյգն կարծուած իսկ իրաց ամբող-
ջական էութիւնը՝ որ տեսակաբար որոշուած
ըլլայ: Արդ ուրեմն ինչ որ ուղղակի չենք
կրնար ճանչնալ, անուղղակի կ'ըմբռնենք
զայն:

Այս կրկին սկզբունքը կը հաստատեն և
կը հաւաստեն նախ՝ իւրաքանչիւր մարդոյ
փորձն և երկրորդ՝ ամենայն իմաստնոց վար-
դապետութիւնն: Եւ այս կրկին սկզբանց վը-
րայ հիմնեալ կը հաստատենք նախ՝ որ հարկ

է համեմատութիւն մ'ըլլայ ի մէջ այն ազ-
գակաց որոնք իր մը յառաջ կը բերեն՝ և
այդ յառաջ եկած իրին. դարձեալ՝ թէ իրի
մը յատկութիւնք են ցումունք նոյն իրին
ուսկից կը ծագին, և մարդս՝ իրաց էութիւնը
քննելու համար նախ կը քննէ անոնց յառ-
կութիւնները և գործողութիւնները, և մեր
միտքն այս եղանակաւ կը հասնի ի ծանօ-
թութիւն նոյն իրաց էութեան. զոր օրինակ
ծառի մը տեսակը կը ճանչնանք իրեն պտուղ-
ներէն, և գետոյ վրայ գաղափար մը կը
կազմենք անոր աղբբաց ձեռքով: Բովան-
գակ իմաստասիրական դիտութիւնն այս
սկզբան վրայ հիմնեալ է, զոր օմանք ի նոր
իմաստական կ'ուզեն քանդել երկու երեք
խօսք յօսք արձակելով՝ առանց իրենց հակա-
ռակորդաց փաստերը ի մէջ բերելու և հերքե-
լու, և կը կարծեն թէ յաղթութիւնը ձեռք
բերին. ինչպէս ազգային տարբիւնականութեան
չեքմ՝ պաշտպաններէն միոյն գրուածոց մէջ
կը տեսնուի: Եւ այս է սովոր ուսման աչքին
փոշի նետել՝ որպէս զի ճշմարտութեան լոյսը
չկարենայ նշմարել. սակայն յուսալով՝ որ
այդ կարևոր կէտին վրայ յարմար առթիւ
զբաղինք՝ կը զաւանթը մեր նիւթին:

Մագնիսական քնոյ էութիւնը ըմբռնելու
համար երկու հետեւեալքն կարևոր են. Ա. Ի՛նչ
պայմաններով և ինչպիսի՞ ազդեցութեանց
ներքոյ առաջ կոչ գայ մագնիսական քոռնն.
— Բ. Ինչպիսի՞ երևոյթներ առաջ կը բերէ:
Այս երկու կարևոր կէտերուն առաջինը կը
պարզենք՝ բացատրելով թէ ի՛նչպէս մագնի-
սական քոռնն առաջ կոչ գայ:

Ա

Մագնիսական քոռնն շատ բարի մարդ-
կանց կասկածեիլ եղաւ՝ թուն իսկ զայն ա-
ռաջ բերելու համար գործադրուած միջոց-
ներուն պատճառաւ. և մագնիսութեան հա-
կառակորդք այս գործադրուած միջոցաց ան-
տեղութիւնէն փաստ մը կը հաննեն հակառակ
մագնիսական քնոյ: Մենք այս փաստը ընդ-
լայնելով մէջ պիտի բերենք, սակայն որպէս
զի այդ լաւ կերպով պարզուի՝ հարկ է ա-
ռանձին մտադրութեամբ նախ պարզենք հոս
24

մագնիսութեամբ քնացընելու զանազան ե-
զանակները՝ որք շատ տեսակ են, և զորս
նոյն ինքն մագնիսացընողք յաջողոյ կերպով
կը պատմեն :

Մեր վերոյիցեալ յառաջաբանին մէջ մագ-
նիսական ճնոյ ենթարկուած պատանին քնա-
ցաւ¹. և այդ քնացընելու կերպը գրեթէ նոյն
է վերջին ժամանակները գործադրուած կեր-
պին հետ, զոր Իւստ այսպէս կը նկարա-
գրէ. «Մագնիսական ճնոյ ենթարկելի ան-
ձին զիմաց կը նստիս, և կը յանձնես իրեն
որ ըստ կարելոյն սեւեռ աչքը բու վրայ և
նր լայ ընդի. և զու ալ անընդհատ անոր
աչաց կը նայիս: Նախ անոր սրտէն մի քանի
խոր հառաչանք յառաջ կու գան, և ապա
արտահանուողը կը բացուին և կը գոցուին
յաջորդաբար, և արցունքով կը լեցուին, և
շատ անգամ աչքերն խաղալէն յետոյ, վեր-
ջապէս կը փակուին² »:

Բայց ամէն մտադ վերոյիցեալ պատանւոյն
պէս զիրաւ չի քնանոր, և քնացընողին
համար ալ մեծ նեղութիւն է իւր աչքերը
անընդհատ սեւեռն իւր զիմացը կեցող են-
թակային աչացը վրայ: Հետեաբար՝ ջանա-
ցին շատերն զտնել ուրիշ զիրազոյն կերպ
մը՝ մագնիսական ճնոյ ենթարկելի անձին
աչաց վրայ ազդելու համար: Եւ յիրաւի
զտնուեցան, հնարուեցան այլ կերպեր և մի-
ջոյնքեր :

«Քանանական երիտասարդ մը պիտի քնա-
ցընէի, կ'ըսէ նոյն Մօլ: Կը նստեցնենմ զինքը
աթոռոյ մը վրայ, և ձեռացը մէջ կը դնեմ
ապակեայ կոճակ մը՝ զոր աչացը զիմաց
պիտի բռնէ և անոր վրայ պիտի սեւեռ իւր

աչքը: Երեք վայրկեան ետքը արտահանողը
կը փակուին, և կը տեսնեմ որ ի զուր կը
ջանայ բանալ իւր աչուրները. միննոյն ա-
տեն ապակեայ կոճակը բռնող ձեռքը կը
խոնարհի և ծնկացը վրայ կ'իյնայ³ »: Երեւ-
տասարդը քնացեր է:

Ինս պարզազոյն միջոց կայ, ինչպէս որ
կը վկայէ ակնատես վկայն Քուքոնիէի, որոյ
Hypnotisme franc մատենաը մեր աչաց
առջև ունինք և որուն ըստ կարի պիտի հե-
տևինք: Արդ սա կը գրէ թէ մագնիսացու-
ցիչ բժիշկ մը փոխանակ փայլուն կոճակը
քնացող ենթակային ձեռքը տալու, ճիշտ
ըթին արմատին վրայ կը հաստատէ զայն՝
գրեթէ աչացը մէջ: Այս կերպիս մէջ բնաւ
նեղութիւն չկայ թէ՛ ենթակային և թէ մագ-
նիսացընողին համար: Այս կերպը կը գոր-
ծարեն ի Փարիզ *SALPÊTRIÈRE* հիւան-
դանոցին մէջ⁴:

Իսկ ի հիւանդանոցին *CHARITÉ*, Լիւի
լուազոյն միջոց կը գործածէ, այսինքն,
հայելի արտառոյթ⁵ կ'ուշուածը: «Մտածելով
այս շարժական հայելիներուն զիւթիչ և ազ-
դող զօրութիւնը՝ երբոր արևուն ճառագայթ-
ները զարնեն անոնց վրայ, որով արտոյտ-
ները յինքեանս կը ձգեն, ինքնիրենս հար-
ցուցի, կը դրէ Լիւի, թէ արդեօք նմանու-
թեամբ մը՝ նոյն հայելիք շեմ կրնար մար-
դուս վրայ ևս, գոնէ շրային անձանց՝ որոնք
նախապէս տրամադրեալ են, նոյնպիսի ազ-
դեցութիւններ ընել, որով մեքենաբար իյնան
մագնիսական ճնոյ մէջ »: Գործը յաջող ելը
ունեցաւ ըստ իրեն փափաքանաց⁶:

Լիւի յառաջ կը վարէ խօսքը. «Երբոր

1. Albert Moll, *Der Hypnotismus*, Բ, տպ. էջ
16. Փորձ Գ:
2. Dr. Cullère, *Magnetisme et hypnotisme*, էջ 104:
3. Վերոյիցեալ մատենան. էջ 15. Փորձ Ա:
4. Cullère. էջ 103:
5. Հայելի արտառոյթ (Miroir à alouette)
ըսուած սակաւածանօթ ըլլալուն համար՝ ան-
շուշտ մեր ընթերցողք յօժարութեամբ կը կար-
դան Տօքթոր Ֆօօլոյ աը Քուրմէլի հետեւեալ
նկարագիրը. «Անկէնուար երեսներով ինքնա-
շարժ հայելիք են, որոնք կազմուած են հա-
տուածակողմն փայտի կտորներով՝ որոց մէջ ա-

զուցուած են հայելւոյ կտորք, սովորաբար
կրկնակք են և խաւածակք: Որտեղք կը գործ-
ածեն զայդ արտոյտ բռնելու համար, վասն
զի անոր վրայ արեգակնէն ճառագայթները
կ'անդրազառնան ամէն կողմէ և դէպ չորիզու-
նին ամէն կէտերը »: *L'hypnotisme*. էջ 52: —
Տես ևս Քուք. արտառոյթ և գիտաբանաց, և
այլն. Հ. Ման. Վ. Քալուսի. էջ 93. տպ. 1892:
Վենետիկ:

6. Dr. Luys, *Les émotions dans l'état d'hypno-
tisme*. էջ 73:

մագնիսական ջնոյ ենթարկելի անձը այս վերոյիշեալ ինքնաշարժ գործւոյն զիմաց կը կանգնի, արգէն գործին լաւ կերպով կ'ան. դրագարձընէ լոյսը, ապա կ'ըսեմ նոյն անձին սեեաձ նայել զէպ ի հայելին, և ընդհանարպէս հինգ վեց վայրկեան յետոյ, երբեմն վայրկեան մէջ ալ, կը տեսնենք որ աչքերը փակեք ու քնացք է¹»:

Այս հայելւոյն առաւելութեանց մին եւ այս է ըստ Լիւիյի. «կրնանք նոյն գործւոյն չորս կողմը կեցընել երեք կամ չորս անձինք և միանգամայն քնացընել զիրենք. և այս օգտակար կէտ մ'է մագնիսական ջնոյ քնութեան համար, որովհետև միանգամայն բազմութիւն անձանց վրայ նոյն երևոյթները կը դիտենք²»:

Երբեմն ալ փոխանակ երկար և մեղմ կերպով ազգելու ենթակային աչաց վրայ, սաստիկ և յանկարծական ազդեցութեամբ եւ կրնայ յառաջ բերուի մագնիսական ջուրը: «Քալածանօթ է զիսնոց, կ'ըսէ Տօքը. Պօզոս Մարէն, որ երբեմն փայլակ ինքնակ ուղղագարութիւն (catalepsie) յառաջ կը բերէ ոմանց վրայ: Արդ նոյրը կրնանք կատարել արուեստական կերպով ալ, այսինքն, անձի մը երեսին վրայ ելեկտրական լուսոյ յանկարծական ճառագայթ արձակելով, և կամ գործածելով մագնիսի լատտերը՝ որով կրնանք մագնիսի լուսոյն սաստիկ ճառագայթները արձակել և ուղղել զէպ ի մեր ուզած կողմն³»:

Այսու ամենայնիւ հարկաւոր չէ՞ որ պայծառ և լուսաւոր ըլլայ այն առարկան՝ որոյ վրայ ենթական իւր աչքը պիտի սեեոէ, վասն զի բաւական է որ նա այս ինչ կէտին վրայ կեկրոնացընէ իւր աչաց զօրութիւնը. զոր օրինակ, կրնանք քնացընել մէկը պարզ մագնիսացուցչին մատին ծայրը նայել տալով: Տօքը. Պուշիւ կը պատմէ՝ որ փոքրիկ աղջկան վրայ մագնիսական ջնոյ ամէն եւրեթոյթներն կը տեսնուէին անթերի կերպով՝ երբ նա զդեստին կոճակները կ'անցընէր օ-

ղերուն մէջ. վասն զի այս զօրծողութեան համար կը հարկադրուէր իւր նայուածքը և ուշադրութիւնը կեկրոնացընել միենայն կէտի վրայ: Միով բանիւ, յամախ հիւանդը ոմանք ուղղագարութեան մէջ ինկեր են մի քանի վայրկեան հայելւոյ մէջ նայելով:

Յարգ ըսածնէս յայտնի է՝ որ մագնիսացընելու բազմութիւ միջոցներ ու կերպեր կան պարզապէս աչաց վրայ ազդեցութիւն ընելով: Սակայն հաւաստարպէս մագնիսական ջուրը առաջ կու գայ սկանչաց և այլ զգայարանաց վրայ ևս ազդելով ու ներգործելով, զոր յաջորդաբար պիտի պարզենք:

Մեղմ և միակերպ ազդեցութիւն մը լսելուց վրայ՝ եթէ ըստ բաւականի երկայն տեւ, զիբաւ մագնիսական ջուրն յառաջ կը բերէ: Ի Գերմանիա՝ Հայտնահայն կը զօրծադրէ զայլ յօժարակամ. — Օր մը երեք ուսանողը կը խնդրեն որ զիրենք քնացընէ, նա կը զիբանի անոնց աղաչանաց, և կը նստեցընէ զիրենք սեղանի մը շուրջը, որոյ մէջակը կը դնէ իւր ժամացոյցը, և կը յանձնէ որ հանգարարութիւն մտիկ ընեն անոր զարնուածքը. հազուի հինգ վայրկեան կ'անցնի, և ահա երեքն ալ քնացքը կ'են:

Փիղրը, Պորտոյի բժշկութեան ուսումնաբանին ուսուցիչ և գահերէց, նմանօրինակ փորձ մը կը ներկայացընէ մեկի Սուրբ Անդրէաս հիւանդանոցին սրահներէն միոյն մէջ.

«Յովհաննա ամրոտի մը վրայ կը նստի, և սկանչիւն մտն կը դնեմ ժամացոյցս, ինչը զրելով իրմէ որ ուշադրութեամբ մտիկ ընէ անոր զարկը: Տասն երկվայրկեան ետքը երկայն շունչ մը կ'անուռ, և կը քնանայ. վասն զի իրեն անդամոց տրուած զիրքը կը պահէ, իսկ աչքն լայնաբար բաց են: Սպասենք մի քանի երկվայրկեան ևս. կը խնարհին արտահանուցը, իսկ անգամներն կը մնան իրենց տրուած զրից մէջ: Բայց ժամացոյցը թող վայրկեան մ'և կենայ. նայինք վերջապէս ինչ կ'ըլլայ: Յանկարծ բոլոր ան-

1. Նոյն մատեանն:
2. Նոյն. էջ 74:

3. L'hypnotisme théorique et pratique. էջ 75:
— Charcot, Oeuvres complètes. հտ. Թ. էջ 234:

զամեններն կը թուլանան, հիւանդն ինքն իրեն վրայ կը ձուխ, ամբողջ կը սահչի, և անկենդան նիւթոյ պէս կ'իյնայ յատակի վրայ՝ »:

Եթէ՛ սաստիկ և յանկարծական ըլլայ զգայարանաց գրգռումը և եթէ՛ անընդհատ և մեղմ, ջղային քունն յառաջ կու գայ, զոր օրինակ, յանկարծական սաստիկ ձայն եւ բաժտական գործուոյ մը անմիջապէս ուղղագարութեան մէջ կը ձգէ հիւանդը՝: Պոռտնըվիլի և Ռենեսարի հիւանդին պատմութիւնը ծանօթ է: Սա ծնծղայ մը կը զարնէր. և ահա յանկարծ ձեռքէն կը սահչի կ'իյնայ, և ինքն ալ անզգայ կ'ըլլայ: Իսկ վերոյիշեալ բժիշկներն անոր ձայնը և շարժումը չչսելով՝ կու գան փնտռելու զինքը և կը գտնեն անշարժ և քնոյ մէջ: — Ծանօթ է և զուարճալի ուրիշ հիւանդի մը դէպքն ալ. Salpêtrière հիւանդանոցին մէջ կը կասկածուէր՝ որ այդ հիւանդը Ռիշէրի բիմիատունէն լուսանկարներ կը գողնար. իսկ նա զայրացմամբ կը պաշտպանէր ինքզինքը: Առաւօտ մը բժիշկը կու գայ ուրիշ հիւանդաց վրայ փորձեր ընելու, և կը տեսնէ գողին ձեռքը լուսանկարներուն զարանին մէջ. կը մօտենայ, իսկ հիւանդը անշարժ կը կենայ: Կը քննէ և կ'իմանայ՝ որ մերձաւոր սրահին մէջ ծնծղայի ձայնէն ազդուելով անզգայութեան մէջ ինկեր է՝ մինչդեռ գողութիւն կ'ընէր:

Այդ փորձերն ու օրինակներն կը հաստատեն՝ թէ ալաց և ականջաց ձեռքով կարելի է մագնիսական քուն առաջ բերել, պիտի տեսնենք որ շօշափելեօք ևս հաւասարապէս կրնանք մագնիսացընել:

Մորթի թեթև և յաճախակի գրգռումն՝ կրնայ ըլլալ պարզապէս բերելով մորթը, աչքին գնդակները մեղմով ճգնելով կամ ականջաց վրան սեղմելով, ելկտրական փոքրիկ հասանք մ'անցընելով, մագնիս գործածելով: Եւ եթէ մորթը գրգռուի, շատ անձանց վրայ մագնիսական քուն կու գայ:

Տը Ճօն կը պատմէ՝ որ շատ անգամ և շատ միջոցներով փորձեր է քնացընել մարդ մը, բայց ամենևին չէ յաջողած. սակայն զանկին որոշակ կէտ մը շփելով՝ մի քանի վայրկեան ետքը անզգայացք է՝: Նոյն բժիշկը թերևս այս մարդուն վրայ հանդիպեր է քնածին գօտի բուսածին: — Եւ ոմանց այս առանձնայատկութիւնը կը յորպորէ զմեզ իստեղու նոր գիւտի, կամ լաւ ևս, նոր յոյժ հետաքրքրական գրովեան վրայ՝ զոր վերոյիշեալ քնածին գօտիք կոչուածի մասին հաստատեցին ոմանք ի գիտնոց:

Շարքոյ, Ռիշէր և Տիւմոնփայլիէ այդ տեսակ գօտիները արդէն իսկ նշանակած էին. բայց Փիլլըր առանձին ինամբով և գրովեամբ ուսումնասիրեց այս կարևոր խնդիրը՝ իրեն *L'hystérie et L'hypnotisme* երկասիրութեան մէջ, ուսկից բաղելով պիտի բացատրենք այս նոր գրովեանը՝ հեղինակին տուած բացատրութենէն կարևոր հետևանքներ հանելով:

Հ. Ս. ՍԱՐԵԱՆ

Շարայարելի

ԳՐԱԽՈՍԱԿԱՆ ԱԿՆԱՐԿՆԵՐ

1. Միջին ընթացք իմաստասիրութեան. — Աշխատասիրեաց Հ. Եղուարդ վ. Միրունեան ի Միխիթարեան Ուխտէ. — Վիեննայի, 1899. զին. 2:

Իմաստասիրութեան՝ հանդիսարան է մարդկային մտաց կրած յեղափոխութեանց և անոր բազմազան գաղափարաց, որոց եթէ՛ զեղեցիկ և եթէ՛ տգեղ պատկերները ի հանդէս հաներ է սոյն Միշիյն ընթացքս:

1. Leçons cliniques sur l'hystérie et l'hypnotisme. 4^o. p. 52 88:

2. Charcot: վերոյիշեալ մատեան. էջ 304:

3. Comptes rendus du premier Congrès de l'hypnotisme. Paris, 1890. էջ 192: